Պողոսյան Ն. - Հնարված քաղաքի պատմիչը – թերթ, «Ազգ», Ե., 25.09.1999

Երեկ Հայաստանի ազգային պատկերասրահում բացվեց գեղանկարիչ Արամ Իսաբեկյանի անհատական ցուցահանդեսը: Ներկա էին Սահմանադրական դատարանի նախագահ Գ.Հարությունյանը, մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար Ռ.Շառոյանը, սփյուռքահայեր, պաշտոնատար անձինք, արվեստագետներ, ուսանողներ, ընկերներ: Հենրիկ Իգիթյանը, բարձր գնահատելով նկարչի արվեստը, հույս հայտնեց, որ մի օր էլ Իգդիրում կցուցադրվեն նրա նկարները (Իսաբեկյանների ընտանիքը ծագումով Իգդիրից է):

Ցուցադրված են Արամ Իսաբեկյանի վերջին տասնամյակի գործերը: Նկարները բազմաձև են՝ գունավոր գրաֆիկա. «Շարժում», «Հնարած քաղաքում», բնանկարներ. «Հայաստան», նատյուրմորտներ. «Եգիպտական արձանիկով նատյուրմորտ», դիմանկարներ. «Վերածնունդ», «Հորս դիմանկարը», կոմբինացիաներ և այլն: Խորիմաստ ու հետաքրքիր է «Իմ ճանապարհը» կտավը. երկնագույն երկնքում, հայոց կապույտ լեռներով եզրագծված, շագանակագույն հողի վրա պատկերված է փայտե խաչ, գլոբուս, կանթեղ, խեցի և խնձոր (ինքնաբացահայտման յուրօրինակ արտահայտություն): Նկարներից բխում է կյանքը՝ ինչպես որ կա… պատանեկան երազանքներով, հասուն մարդկանց հոգսերով, հոգեկան տվայտանքներով, մարդկային ապրելակերպի ներքին ու արտաքին դրսևորումներով:

Ազգային պատկերասրահում նաև վաճառվում է «Արամ Իսաբեկյան» գիրքը՝ անգլերեն և հայերեն, ուր նկարչի ստեղծագործությունների վերատպություններն են, հայտնի մարդկանց կարծիքը նրա արվեստի մասին, լուսանկարներ մտերիմների, ընտանիքի անդամների հետ: Գիրքը փակվում է կարմիր ֆոնի վրա «Վարդեր» գեղեցիկ նատյուրմորտի վերատպությամբ:

Ցուցահանդեսը բաց է լինելու մինչև հոկտեմբերի 24-ը:

Նաիրա Պողոսյան